# Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 62-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 21-րդ մասով.

«21. Գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվող՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձից ձեռք բերված իր կողմից արտադրված գյուղատնտեսական արտադրանքի առուվաճառքի գործարքների համար ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում գյուղատնտեսական արտադրանքի վաճառքի և ձեռքբերման արժեքների դրական տարբերությունը:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 55-րդ կետով.

«55) Սպանդանոցային ծառայությունների մատուցումը, ինչպես նաև անմիջական սպանդանոցային ծառայություն մատուցողի կողմից վերամշակված՝ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված արտադրանքի օտարումը Հայաստանի Հանրապետության տարածքում:»:

**Հոդված 3.** Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասում «64-րդ և 65-րդ հոդվածներով» բառերը փոխարինել «64-րդ, 64.1-րդ և 65-րդ հոդվածներով» բառերով:

**Հոդված 4.** Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 64.1-րդ հոդվածով.

«**Հոդված 64.1.** Ավելացված արժեքի հարկի 7 տոկոս դրույքաչափով հարկվող գործարքները

1. ԱԱՀ-ի 7 տոկոս դրույքաչափով հարկումը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն 7 տոկոս դրույքաչափով հաշվարկելն է:
2. ԱԱՀ-ի 7 տոկոս դրույքաչափով հարկվում են Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ կառավարության սահմանած ցանկում

ընդգրկված գյուղատնտեսական արտադրանքի և դրա վերամշակման արդյունքում ստացված արտադրանքիօտարումը՝ Հայաստանի Հանրապետության տարածքում:»:

**Հոդված 5.** Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընդգրկված հարկային տարիների համար շահութահարկի վճարումից ազատվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված շահութահարկ վճարողները՝ իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի, դրա վերամշակման արդյունքում ստացված՝ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված արտադրանքի  իրացումից ստացվող եկամուտների, ինչպես նաև այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների մասով, եթե այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների տեսակարար կշիռը համապատասխան հարկային տարվա համախառն եկամտի մեջ չի գերազանցում երեսուն տոկոսը: Այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների տեսակարար կշիռը համապատասխան հարկային տարվա համախառն եկամտի մեջ երեսուն տոկոսը գերազանցելու դեպքում սույն մասով նախատեսված արտոնությունը գործում է միայն գյուղատնտեսական արտադրանքի, դրա վերամշակման արդյունքում ստացված՝ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված արտադրանքի  իրացումից ստացվող եկամուտների մասով: Սույն մասի կիրառության իմաստով՝:»:

**Հոդված 6. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: